

12184



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

«08» 11 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 239 - 24

Նախաձեռնող՝

«ՌՊՏ» ՍՊԸ

Շիրակի մարզ, Նոր Կյանք, 1 փ., պ 33

Գործունեությունը՝

Արթիկի փուֆերի հանքավայրի «ՏՈՒՖԱԶՈՐ»  
տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման  
նպատակով երկրաբանական ուսումնասիրություն  
Շիրակի մարզ, Տուֆաշեն բնակավայր

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 239 - 24

«08» Ապրիլի 2024 թ.

Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի «ՏՈՒՖԱԶՈՐ» տեղամասում նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՌՊՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Արթիկ համայնք, Տուֆաշեն բնակավայր

**Ներածական մաս.** «ՌՊՏ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի «Տուֆաձոր» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներով: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆաշեն բնակավայրի վարչական տարածքում:

**Նկարագրական մաս.** Տուֆաձոր տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ խոշորացված համայնքի վարչական տարածքում և զբաղեցնում է 6,63 հա մակերեսով տարածք: Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 7-36,0 մ խորությամբ 14 հորատանցքերով, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Հորատանցքերի ընդհանուր ծավալը կազմում է 316 գծ.մ: Ընտրված հետախուզացանցը հետախուզական փորվածքների միջև 73-196 մ հեռավորությամբ է, որը թույլ կտա հետախուզված պաշարները գնահատել արդյունաբերական A կարգով: Յուրաքանչյուր հետախուզագծի վրա հորատանցքերի միջոցով օգտակար հաստվածքը կուսումնասիրվի ամբողջ հզորությամբ: Նախատեսվում է տուֆերաֆիական և երկրաբանական հանույթ, ինչպես նաև փորձնական բացահանքի անցում, նմուշարկում, ֆիզիկամեխանիկական արտադրության փորձարկումներ և ուսումնասիրություններ: Հորատման աշխատանքները





կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Նախատեսվել է հորատումը կատարել կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 96-112 մմ տրամագծերով: Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ լեռնային զանգված 1224,0 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով (68,0մ x 6,0մ x 3,0մ), որից 150,0 մ<sup>3</sup> թարմ չհողմնահարված տուֆերից: Նախատեսվում է 3 կետով կատարել օգտակար հաստվածքը ծածկող ապարների ծավալային զանգվածի որոշման աշխատանքներ: Հաշվի առնելով տեղամասի ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան բարվոք ճանապարհները՝ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում նախատեսվում է հորատման 3 հարթակների և այդ հարթակներին մոտեցող 120,0 գծ.մ ճանապարհների շինարարություն: Հայցվող տեղամասի արևմտյան եզրագծին հարակից հատվածում, հայցվող տարածքից դուրս նույնպես առկա է շահագործված տարածք, երկու լցակույտ: Բուն տեղամասում նախկինում շահագործված/խախտված տարածքներ չկան: Հայցվող տեղամասի տարածքում առկա է լցակույտ, որի հիմքի երկարությունը կազմում է մոտ 350 մ, հիմքի լայնությունը՝ մինչև 14 մ, վերին հարթակի լայնությունը՝ մոտ 8 մ, բարձրությունը՝ մոտ 2,3 մ: Լցակույտում կուտակված է մոտ 15,1 հազ.մ<sup>3</sup> զանգված՝ ջարդոտված, փշրված տուֆեր, հողագրունտ:

Հայցվող տեղամասի կոորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են ստորև.

X	Y	X	Y
4498674.0	8408787.0	4498156.0	8409278.5
4498698.0	8408861.0	4498182.3	8409340.8
4498593.0	8408955.0	4498267.1	8409168.7
4498551.0	8409006.0	4498310.0	8409160.0
4498471.0	8409119.0	4498442.0	8409048.0
4498165.0	8409404.0	4498492.0	8408963.0
4498112.0	8409349.0	4498492.0	8408859.0

**Պատճառաբանական մաս.** Փորձաքննության գործընթացում Օրենքով սահմանված կարգով ազդակիր բնակավայրում (Տուֆաշեն) իրականացվել է հանրային լում, որի ընթացքում Տուֆաշեն բնակավայրի բնակիչները նախատեսվող գործունեությամբ պայմանավորված ներկայացրել են մի շարք մտահոգություններ: Բնակիչները միաձայն դեմ արտահայտվեցին երկրաբանական ուսումնասիրությունների իրականացմանը՝ նշելով, որ հետագայում հանքավայրի բացման պարագայում կորցնելու են արոտավայրերը: Բացի այդ, բնակիչները նշեցին, որ հանքավայրի բացման դեպքում նույնիսկ ճանապարհ չի մնում անասունների տեղաշարժի համար և իրենց համար դա լուրջ խնդիր է: Հանրային լման ընթացքում բնակիչները հարց բարձրացրեցին հայցվող տարածքի հարակից տարածքներում առկա փոշու մասին և նշեցին, որ փոշին նստում է հարևանությամբ գտնվող ցորենի և մյուս մշակաբույսերի վրա, ինչը լուրջ խնդիրներ կարող է առաջացնել իրենց առողջության համար: Հարց բարձրացվեց նաև հայցվող տարածքի հարակից տարածքում նախկինում շահագործված և լքված տարածքի վերաբերյալ և բնակիչներից շատերը հավաստիացնում էին, որ այդ տարածքում ևս գործունեություն է իրականացվել նույն քաղաքացու կողմից: Անդրադարձ կատարվեց նաև հայցվող տարածքում գտնվող փոքրիկ լճակին, որտեղից սովորաբար ջուր են խմում անասունները: Բնակիչները նշեցին նաև, որ հարակից տարածքում առկա է խմելու





ջրադրյուր, որի վերաբերյալ հաշվետվությունում չի հիշատակվել: Նախաձեռնողը խոստացավ սոցիալական աջակցություն ցուցաբերել համայնքին, բնակիչներին ապահովել աշխատանքով, սակայն բնակիչները հրաժարվեցին բոլոր տեսակի աջակցությունից՝ կարևորելով իրենց առողջությունը:

### Փորձաքննական հիմնավորումներ

Փորձաքննության գործընթացում Օրենքի պահանջներին համապատասխան ՇՄԱԳ հաշվետվությունն ուղարկվել է կարծիքների պետական կառավարման մարմիններին և ՇՄՆ ստորաբաժանումներին: Պետական մարմիններից և ՇՄՆ ստորաբաժանումներից ստացվել են մի շարք դիտողություններ ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ: Հաշվետվությունն ուղարկվել է լրամշակման, սակայն նախաձեռնողի կողմից այն լրամշակվել է թերի, դիտողությունների մի մասը չի շտկվել, մասնավորապես՝

1. Փորձաքննության գործընթացում պարզվել է, որ հայցվող տարածքի հարևանությամբ հանդիպում է ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 2 բույս՝ Տուղտավարդ Սոֆիայի և Լերդախոտ ակեիեր: Թախտաջանի անվան բուսաբանության ինստիտուտի կողմից առաջարկվել է իրականացնել լրացուցիչ հետազոտություններ՝ նշված բույսերի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար: Առաջարկության վերաբերյալ ընկերության ներկայացուցիչները ներկայացրել են մասնագետի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում կազմված եզրակացություն: Ներկայացված եզրակացության համաձայն՝ ուսումնասիրությունը տարածքում կատարվել է 1-2 օրվա ընթացքում, ինչը չի կարող բավարար հիմք հանդիսանալ այն մասին, որ տարածքում բացակայում են նշված կարմիրգրքյան բուսատեսակները՝ հաշվի առնելով բույսերի վեգետացիոն շրջանի հետ կապված առանձնահատկությունները և այն հանգամանքը, որ ուսումնասիրություններն անհրաժեշտ է իրականացնել ամբողջ վեգետացիոն շրջանի ընթացքում,

2. հաշվետվությունը լրամշակելիս առաջարկվել է նախատեսել տարածքում հանդիպող ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված՝ Ներկարար – *Coracias garrulus* (Linnaeus, 1758) տեսակի ապրելավայրերի մշտադիտարկման աշխատանքների իրականացում և տեսակին բնորոշ առանձնյակների կամ բների հայտնաբերման դեպքում առանձնացման, տեղափոխման, պահպանության և պաշտպանությանն ուղղված միջոցառումներ, ինչը չի կատարվել ընկերության կողմից,

3. հաշվետվությունը լրամշակելիս առաջարկվել է մշտադիտարկումների պլանը և բովանդակությունը համապատասխանեցնել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներին, սակայն ընկերության կողմից առաջարկությունը չի ընդունվել և թերությունը չի շտկվել, ավելին՝ մթնոլորտային օդի պահպանության նպատակով մշտադիտարկումներ չեն նախատեսվել հորատահարթակների մոտ, ճանապարհներին և ազդակիր համայնքում,

4. առկա են անհամապատասխանություններ երկրաբանական ուսումնասիրության ծրագրի և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված տվյալների միջև՝ կապված փորձնական բացահանքի չափերի, լեռնային զանգվածի ծավալների, թարմ չհողմնահարված տուֆերի քանակի, ընդերքօգտագործման թափոնների ծավալների հետ,

5. հանրային լսման ընթացքում բնակիչների և վարչական ղեկավարի պնդմամբ տվյալ տարածքում առկա է փոքր լճակ, որը սնվում է անձրևաջրերից և որտեղից ջուր





են խմում գյուղի անասունները, սակայն հաշվետվության մեջ այդ մասին հիշատակված չէ, չնայած այն հանգամանքին, որ լրամշակման ուղարկելիս պահանջ է դրվել ներկայացնել տեղեկություններ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ տարածքում և հարակից տարածքներում առկա մակերևութային և ստորերկրյա ջրերի, ինչպես նաև՝ ջրահոսքերի վերաբերյալ,

6. հանրային լսման ընթացքում բնակիչների կողմից ցուցադրվեցին տարածքում արված լուսանկարներ, որոնցում հստակ երևում էր արոտավայրերի ու վարելահողերի վերևում կուտակված փոշին, ինչը նշանակում է, որ տվյալ տարածքում արդեն իսկ առկա են բնապահպանական և առողջապահական ռիսկեր և նոր ազդեցություններով ծանրաբեռնելը կարող է վատթարացնել առկա վիճակը,

7. հանրային լսումից հետո Օրենքով սահմանված կարգով Տուֆաշեն բնակավայրի բնակիչները ներկայացրել են գրություն, որի համաձայն դեմ են նախատեսվող գործունեությանը (կազմակերպվել է ստորագրահավաք՝ մոտ 90 հոգի):

Հաշվի առնելով վերը նշված բնապահպանական հիմնավորումները և ազդակիր բնակավայրի բնակիչների դժգոհությունները՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրականացումը նշված տարածքում համարվում է ոչ նպատակահարմար:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները և հիմք ընդունելով Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը՝ «ՌՊՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Շիրակի մարզի Արթիկի տուֆերի հանքավայրի «Տուֆաձոր» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Քրիստինե Հարությունյան